Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով շարունակելու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, ՏԻՄ որոշումների, մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, ինչպես նաև լուծելու է հանրահավաքների արդյունքների ու պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրով նախատեսված ՀՀ սահմանադրական դատարանի առաջնահերթ ռազմավարական նպատակներն են.

- *Բարձրացնել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը, ապահովել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,*
- *իր գործունեությամբ նպաստել սահմանադրության և նրանում ամրագրված իրավունքների ու պարտավորությունների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,*
- *սահմանված կարգով որոշում կայացնել օրենքների, Ազգային ժողովի որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրությանը համապատասխանության մասին,*
- *շարունակել Հանրապետությունում իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ գործունեությունը:*

Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել, նրանց իրագործման ռազմավարությունով ՀՀ սահմանադրական դատարանը հետամուտ կլինի հետևյալ արդյունքներին, մասնավորապես՝

Օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև վավերացումը որոշել միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծել հանրաքվեների հետ կապված վեճերը:

Սահմանադրական դատարանի այս լիազորությունը սահմանված է Սահմանադրությամբ և առաջնահերթ է հանդիսանում առաջիկա տարիների համար:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրի իրականացման արդյունքնում ակնկալվում է Օրենքով սահմանված կարգով լուծելով ընդունված որոշումների, օրենքների, իրավական այլ ակտերի սահմանադրությանը համապատասխանությունը՝ ապահովելով նրանց արդյունավետ գործողությունը: Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ են պարտադիրությունը, վերջնական լինելը, անմիջական գործողությունը:

ՍԴ-ի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձնաց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ՀՀ-ի ամբողջ տարածքում:ՍԴ-ի խնդիրը վիճարկվող իրավական նորմի հետագա իրավաբանական ճակատագրի որոշումն է: Կախված ՍԴ-ի որոշումից ՝ վիճարկվող իրավական ակտը կամ կորցնում է իր իրավաբանակն ուժը, կամ շարունակում է պահպանել իր գործողությունը: Այդ իսկ պատճառով ՍԴ-ի որոշումները տարածվում են ոչ միայն վիճարկվող նորմի կիրառման հետ կապված կոնկրետ գործի վրա.Վիճարկվող նորմատիվ ակտի հակասահմանադրականության վերաբերյալ ՍԴ-ի որոշումն ունի գործողության այնպիսի ոլորտ, ինչպիսին որ ունի նորաստեղծ մարմնի նորմատիվ ակտը: